

Թիւ 24275
Փետր. 22, 1974

Արժանաշնորհ
Տ. Տիրան Բհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի
Հայաստանեայց Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գլխավէնա, Օհայօ.

Սիրելի Տէր Տիրան,

Ի պատասխան Փետր. 2, 1974 թուակիր մեր նամակին, ուր կարգ մը
հարցերու մասին լուսաբանութիւններ ուզած էինք, Առաջնորդարան դրկած
էք ժիական ժողովի ատենազրուիւնը միայն:

Ատենազրուիւնի ընթերցումէն ի յայտ եկաւ որ ժիական Խորհուրդի
ընտրութիւնը կատարուած է միաձայնութեամբ՝ որ հակաօրինական է ըստ
մեր Քեմական Կանոնադրութեան թիւ 21 յօդուածին, ուր յստակ կերպով
կ'ըսուի. ``ժիական Խորհուրդի, Հաշուեքննիչ եւ Ընտրական Յանձնախում-
բերու, Քեմական Գաղափարներու եւ ժիական ժողովի Գիւտնի ընտրու-
թիւնները կը կատարուին զաղտնի քուէարկութեամբ``: Անտեղեակ անդամ-

ներու առաջարկները պէտք չէր արտօնուէին եւ ընդունուէին:

Յը հրահանգենք որ երկրորդ ժողովի մը հրաւիրէք Եկեղեցւոյն ան-
դամները, ըստ Քեմական Կանոնադրութեան տրամադրութեանց կատարէք ընտ-
րութիւնները եւ փութով մեզի տեղեկացնէք առ ի վաւերացում:

Սրբ ժողովի ներկաներու թիւը մէկ-երրորդի համեմատութիւնը չը-
լրացնէ՝ անհրաժեշտ է որ նկատի ունենաք Կանոնադրութեան թիւ 17 յօդ-
ուածը:

Ի դէպ, կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել որ նախապէս ղըր-
կուած տեղեկագրին մէջ ժիական Խորհուրդի նորընտիր անդամներու միա-
ձայնութեամբ ստացած քուէներու թիւ 87 յիշուած էր, իսկ ժիական ժո-
ղովի տեղեկագրին մէջ՝ 89:

Յը սպասենք Եկեղեցւոյն ժիական ժողովի արդիւնքներուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ